

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում առաջին «իրավաբանական անձանց» բառերից հետո լրացնել «, բացառությամբ համայնքների, (այսուհետ՝ իրավաբանական անձ)» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկություն	Եզրակացություն
1	<p style="text-align: center;">ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Նաղդայան</p>	<p>Առաջարկում եմ լրամշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը՝ առաջարկվող լրացումը տեղափոխելով օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ համայնքի ավագանու գործունեության կազմակերպման հիմնական դրույթներից հետո:</p>	<p>Ընդունվել է, առաջարկվող լրացումը տեղափոխվել է 11-րդ հոդվածի 3-րդ մասից հետո:</p>
2	<p style="text-align: center;">ՀՀ կառավարություն</p>	<p>«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում առաջարկվում է լրացնել նոր 3-րդ և 4-րդ հոդվածներ՝ հետևյալ խմբագրությամբ՝</p> <p style="text-align: center;">ՀՈԴՎԱԾ 3 «ՀՈԴՎԱԾ 48.1. Երևանի գլխավոր ճարտարապետը</p> <p>«1. Երևանն ունի Երևանի գլխավոր ճարտարապետ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը:</p> <p>2. Երևանի գլխավոր ճարտարապետը կարող է ունենալ օգնական, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում</p>	<p>Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 3-րդ և 4-րդ հոդվածներով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: Միաժամանակ, առաջարկության ընդունման կապակցությամբ համապատասխան փոփոխություն է կատարվել նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում</p>

	<p>է քաղաքապետը»:</p> <p>ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը «վարչական շրջանների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի,» բառերով:</p>	
	<p>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում հոդվածների առանձին-առանձին թվարկելու փոխարեն՝ մեկ ընդհանուր դրույթով սահմանել, որ «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «աշխատակազմ» բառով՝ համապատասխան հոլովածներով:</p>	<p>Ընդունվել է, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>